ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Այս մեծախորհուրդ պահին, երբ Նոր տարին իր հետ է բերում մեծ ավետիսը մեր հոգիների Փրկչի Ծննդյան ու Հայտնության, եղբայրական սիրով լի Մեր հայացքը ուղղում ենք դեպի ձեր պատմական Աթոռը և ձեր գինվորյալ միաբանությունը, որ Ձեր հոգեշեն ղեկավարության ներքո գործում է բարի ներշնչումներով և ջերմ եռանդով հավատարիմ իր հոգևոր, մշակութային ու կրթական պատմական առաքելության:

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության շնորհները թող առատապես բաշխվեն ձեր Աթոռի ուխտապահ միաբաններին ու հավատացյալ ժողովրդին՝ ի փառս բազմադարյան Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու:

Աղոթող ենք նաև, որ մեր Տիրոջ խաղաղության ոգին լուսավորի աշխարհը հանայն, և մարդիկ ու ժողովուրդներ այդ լույսի տակ ճանաչեն միմյանց ու գործեն միասին իբրև եղբայրներ և իբրև որդիները միևնույն երկնավոր Հոր:

«Շնորհ, սէր ու խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ». ամեն:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: